

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԸ

ԳՈՒ ՍԱՐԳՍՅԱՆ

Հարավային Կովկասի երկրների հանդեպ Չինաստանի հետաքրքրությունները քննելիս անհրաժեշտ է նշել, որ դրանք թեև չեն ստացել տարածաշրջանային հստակ բնույթ, այնուամենայնիվ ունեն աճի ակնհայտ միտում՝ պայմանավորված վերջին տարիներին Հարավային Կովկասում Չինաստանի քաղաքական և տնտեսական դերի ամրապնդմամբ: ՀՀ-ում 1990 - ականների վերջին ՉԺՀ արտակարգ և լիազոր դեսպան Չժու Չժաո-շունի կարծիքով, «Անդրկովկասը աշխարհաքաղաքականության մեջ ռազմավարական կարևոր շրջան է: Այն խաչմերուկն է հարավ-հյուսիսի և արևելք-արևմուտքի: Այստեղ խաչվում են նաև ռազմական և տնտեսական տարբեր դաշինքների հետաքրքրությունները: Տարածաշրջանի յուրաքանչյուր երկիր, այդ թվում և Հայաստանը, բնականաբար, իր վրա է հրավիրում արտաքին աշխարհի ուշադրությունը: Չինաստանը Անդրկովկասում չի հետապնդում շահադիտական նպատակներ: Մենք ցանկանում ենք կայունություն և առաջընթաց ամբողջ տարածաշրջանում: Ես կարծում եմ, որ դա բխում է ինչպես Չինաստանի, այնպես էլ տարածաշրջանի երկրների հեռանկարային շահերից»¹:

Հայ-չինական քաղաքական հարաբերությունների հիմնական հետաքրքրությունները զարգանում են իրար նման և միաժամանակ սկզբունքորեն իրարից շատ տարբեր՝ Թայվանի և ԼՂ հիմնահարցերի դեպքում: Երկուսի համար էլ կարևոր է մյուսի դիրքորոշումը հիմնահարցի վերաբերյալ:

ՀՀ և ՉԺՀ արտաքին գերատեսչությունների միջև երեք անգամ՝ 2002 թ. փետրվարին, 2003 թ. դեկտեմբերին և 2006 թ. նոյեմբերին, տեղի են ունեցել քաղաքական խորհրդատվություններ փոխարտգործնախարարների և վարչությունների պետերի մակարդակով:

Հայաստանն աջակցում է ՉԺՀ-ին Թայվանի խնդրում²: Հայաստանի Հանրապետության պաշտոնական հայտարարության համաձայն՝ Չի-

¹ "Китай не преследует корыстных целей в Закавказье" // Политика РА, № 115, 17.06.1999.

² Դեռևս 1992 թ. հուլիսին ՀՀ փոխնախագահ, վարչապետ Գ. Հարությունյանի գլխավորած կառավարական պատվիրակության այցի ժամանակ ընդունված «Համատեղ հայտարարություն» փաստաթղթում, ինչպես նաև ՀՀ և ՉԺՀ միջև 2004 թ. սեպտեմբերի 26-ի համատեղ հռչակագրում (ստորագրվել է երկու երկրների նախագահների կողմից) նշված է. «Հայկական կողմը հաստատում է, որ ՉԺՀ կառավարությունը ամբողջ Չինաստանը ներկայացնող միակ օրինական կառավարությունն է: Թայվանը Չինաստանի տարածքի անբաժանելի մասն է: Հայկական կողմը հաստատում է, որ հավատարիմ է Թայվանի հետ որևէ ձևով պաշտոնական հարաբերություններ չհաստատելու և պաշտոնական բնույթի շփումներ չունենալու սկզբունքին, դեմ է «երկու Չինաստան» կամ «մեկ Չինաստան, մեկ Թայվան» ստեղծելու փորձերին և դեմ է որևէ ձևով Թայվանի անկախությանը: Չինական կողմը բարձր է գնահատում հայկական կողմի այս դիրքորոշումը»:

նաստանը հավասարակշռված դիրքորոշում ունի ԼՂՀ հիմնախնդրի հարցում³:

Հայ-չինական հարաբերությունների զարգացման ոլորտում կարևորվում է 2000 թվականի դեկտեմբերին տեղի ունեցած հանդիպումը ՀՀ վարչապետի և ՉԺՀ պետխորհրդի նախագահի միջև, որի ընթացքում կողմերը հստակեցրին իրենց դիրքորոշումները տարածաշրջանային հակամարտությունների առնչությամբ: Ողջունելով «մեկ Չինաստանի» ճանաչման Հայաստանի սկզբունքային դիրքորոշումը՝ Ջու Շունցզին նշեց, որ Չինաստանը մշտապես հանդես է գալիս հակամարտությունների քաղաքական կարգավորման դիրքերից, ողջունում է հանդիպումները Հայաստանի և Ադրբեյջանի նախագահների միջև՝ խնդրի արդարացի և արդյունավետ լուծում գտնելու համար:

Չինաստանի բարձրաստիճան ղեկավարության հետ հանդիպումների արդյունքներն ամփոփվեցին համատեղ կոմյունիկեում, որում ամրագրվեցին կողմերի մոտեցումները միջազգային հարաբերությունների ծավալման, երկկողմ հարաբերությունների զարգացման և տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման վերաբերյալ: Հատկապես կարևոր նշանակություն ունեցավ կոմյունիկեի 9-րդ կետը, որտեղ *inter alia (ի թիվս այլոց, մասնավորապես)* ներկայացվեց չինական կողմի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման վերաբերյալ. «Չինական կողմը ողջունում է Հայաստանի և Ադրբեյջանի ղեկավարների միջև անմիջական հանդիպումները և միջազգային հանրության ներկա ջանքերը հիմնահարցի խաղաղ կարգավորման ուղղությամբ և հույս հայտնում, որ նշված հակամարտության արդար և ռացիոնալ լուծումը կգտնվի միջազգային ասպարեզում ընդհանուր ճանաչում գտած սկզբունքներին և նորմերին համապատասխան»⁴: Չպետք է մոռանալ, սակայն, որ Չինաստանը պաշտպանում է Ադրբեյջանի տարածքային ամբողջականությունը և դեմ է անջատողականությանը: 2002 թվականին տեղի ունեցած հանդիպումների ընթացքում կողմերը հանգամանորեն անդրադարձան միջազգային կազմակերպություններում երկու երկրների համագործակցությանը, չինացիներին ներկայացվեց իրավիճակը հարավկովկասյան տարածաշրջանում: Հայկական կողմը նշեց, որ Հայաստանը կցանկանար տեսնել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հարցում ՉԺՀ շարունակական հավասարակշռված մոտեցումը: ԼՂ հարցում Չինաստանի քաղաքականությունը, սակայն, հեռու է «հավասարակշռված» լինելուց: Չինական կողմը միշտ

³ ՉԺՀ ԱԳՆ պաշտոնական ինտերնետային կայքում գետեղված դիրքորոշում:

Չինաստանի կառավարությունը հարգում է բոլոր երկրների ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը և հույս է հայտնում, որ Հայաստանը և Ադրբեյջանը կկարողանան խաղաղ բանակցությունների միջոցով արագ, արդարացի և արդյունավետ լուծում գտնել ԼՂՀ հիմնախնդրին, որն ընդունելի կլինի երկու կողմերի համար: Չինաստանի կառավարությունն աջակցում է միջազգային հանրության բոլոր ջանքերին՝ ուղղված ԼՂՀ հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը, և պատրաստ է իր նպաստը բերելու ՄԱԿ-ում և այլ միջազգային հավաքներում այս խնդրի խաղաղ կարգավորմանն օժանդակելու հարցում:

⁴ 中华人民共和国的中国信息的图书。 联合与中华人民共和国和亚美尼亚共和国联合公报。北京(2002-2006)2006, «ՉԺՀ-ի ԱԳՆ տեղեկագիրք. Չինաստանի ժողովրդական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև համատեղ հռչակագիր (2002-2006)», Պեկին, 2006, էջ 19:

ընդգծել է, որ ՉԺՀ-ն հավասարապես բարեկամաբար է վերաբերվում թե՛ Հայաստանին և թե՛ Ադրբեջանին և ԼՂ հարցում չեզոք դիրքորոշում ունի, կողմնակից է ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի շրջանակներում փոխընդունելի, արդյունավետ և արդարացի լուծման տարբերակին:

Հաշվի առնելով տարածքային ամբողջականության և դրա նկատմամբ պետությունների ինքնիշխանության իրականացման իրավունքի բացարձակ, ուստի և խիստ միակողմանի գերակայությունը Չինաստանի արտաքին քաղաքական հիմնարար սկզբունքներում՝ 2002 թվականին միջազգային կազմակերպություններում շարունակվեցին կողմերի շփումները՝ հայկական կողմի համար երբեմն ոչ նպաստավոր ընթացքով: ՉԺՀ-ն կողմ քվեարկեց ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի համագործակցության վերաբերյալ բանաձևի Լեռնային Ղարաբաղին առնչվող ձևակերպման Ադրբեջանի ուղղումներին: Չնայած հայկական կողմից խնդրի համապարփակ ներկայացմանը և Թայվանի հարցում տարիներ շարունակ զսպված և չինամետ քաղաքականությանը՝ չինական կողմը ոչ միայն չփոխեց վերջին տարիներին որդեգրած գործելակերպը, այլև քվեարկությունից հետո հանդես եկավ համապատասխան մեկնաբանություններով: Տարածքային ամբողջականության դիրքորոշումն արտացոլում է հայ-չինական և չին-ադրբեջանական հարաբերությունների ներկա իրավիճակը, ինչպես նաև հարավկովկասյան տարածաշրջանի հանդեպ Չինաստանի հետաքրքրությունները:

2004 թ. ապրիլին ՉԺՀ փոխարտգործնախարար Լի Յույի՝ Հայաստան կատարած այցի ընթացքում չինական կողմը խնդրեց ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեում ՉԺՀ-ում մարդու իրավունքների վերաբերյալ Ամերիկայի առաջադրած բանաձևի առնչությամբ հայկական կողմի աջակցությունը, որը, ըստ փոխարտգործնախարարի, պետք է դրսևորվեր այդ բանաձևը շրջանառությունից հանելու չինական «no action motion» քվեարկությանը սատարելով: Հայկական կողմը ձեռնպահ մնաց չինական կողմի առաջարկից՝ իր դիրքորոշումը մեկնաբանելով որպես առավելագույնս բարեկամական՝ պայմանավորված առաջին հերթին չինական կողմին չվնասելու իր մոտեցումներով: ՉԺՀ արտգործնախարարի Հայաստան կատարած այցի ընթացքում կողմերը պայմանավորվածություն ձեռք բերեցին առավել սերտորեն համագործակցել այս խնդրում՝ ելնելով երկկողմ համագործակցությունում Չինաստանի առկա բարի կամքից: Առաջնահերթ նշանակություն տրվեց ՄԱԿ-ում համագործակցության զարգացմանը և միջազգային կազմակերպություններում ԼՂ-ի հարցի առնչությամբ չինական կողմի «չեզոք» դիրքորոշման ձևակերպմանը:

Այցի ընթացքում գնահատելով փաստաթղթերի կարևորությունը՝ ՀՀ նախկին նախագահ Ռ. Քոչարյանը նշեց. «Մենք անկեղծորեն շահագրգռված ենք Չինաստանի տնտեսական ներկայությամբ Հարավային Կովկասում և հատկապես Հայաստանում: Հայաստանը և Չինաստանը ունեն համագործակցության լայն սպեկտր՝ հաշվի առնելով այն փաստը, որ երկու երկրները չունեն քաղաքական խնդիրներ, իսկ մի շարք միջազգային խնդիրների վերաբերյալ ունեն նմանատիպ մոտեցումներ»⁵: Փաստաթղթում նաև ընդգծվում էր, որ « Թայվանը հանդիսանում է Չինաստա-

⁵ Նույն տեղում:

նի անբաժանելի մասը և որ հայկական կողմը հաստատում է Թայվանի հետ որևէ պաշտոնական հարաբերություններ չհաստատելու և որևէ պաշտոնական բնույթի շփումներ չիրականացնելու իր նվիրվածությունը՝ հանդես գալով «երկու Չինաստան» կամ «մեկ Չինաստան», «մեկ Թայվան», «անկախ Թայվան» ստեղծելու փորձերի դեմ»⁶:

2005 թվականի ընթացքում պահպանվեցին Չինաստանի մոտեցումները Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման, ինչպես նաև Կարս-Ախալքալակ երկաթգծի շինարարության հարցում: Ինչպես ԼՂ հիմնախնդրի, այնպես էլ Կարս-Ախալքալակ երկաթուղու շինարարության հարցի վերաբերյալ չինական կողմին տարբեր մակարդակներով շարունակաբար ներկայացվեցին ու պարզաբանվեցին Հայաստանի ներկայիս դիրքորոշումներն ու դրանց լուծմանն ուղղված ՀՀ կառավարության գործունեությունը: Չինական կողմը խնդրի վերաբերյալ տեղեկացրեց, որ Չինաստանը երբեք չի կատարի որևէ քայլ, որը կհակասի Հայաստանի շահերին, տարածաշրջանի խաղաղությանն ու կայունությանը:

2006 թ. նոյեմբերին տեղի ունեցան քաղաքական խորհրդատվություններ փոխարտգործնախարարների և վարչության պետերի մակարդակներով: Այդ ժամանակ և դրան հաջորդած տարիներին դիրքորոշումները երկուստեք չփոխվեցին. Չինաստանը և Հայաստանը պահպանեցին օբյեկտիվությունը հիմնահարցերի վերաբերյալ:

2009 թ. ՀՀ արտգործնախարար Է. Նալբանդյանը Չինաստան կատարած այցի ընթացքում նշեց, որ ՀՀ-ն կշարունակի հավատարմորեն աջակցել «մեկ Չինաստան» սկզբունքին և Չինաստանի խաղաղ վերամիավորման գործընթացին: Վարչապետ Սի Շիփինգը շնորհակալություն հայտնեց Է. Նալբանդյանին դիրքորոշմանը հավատարիմ մնալու համար⁷:

2010 թ. Շանհայում վարչապետ Տ. Սարգսյանը շնորհակալություն հայտնեց չինական կողմին ԼՂ հարցում հավասարակշռված դիրքորոշման համար և ավելացրեց, որ ԼՂ հիմնահարցի խաղաղ կարգավորումը չափազանց կարևոր է տարածաշրջանում կայունության պահպանման գործում⁸:

Անդրկովկասի տարածաշրջանում Չինաստանի ներկայությունը պայմանավորված է ոչ միայն նրանով, որ նա ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի և միջուկային ակումբի անդամ է, այլ նաև նրանով, որ ունի համաշխարհային զանազան խնդիրների շուրջ սեփական մոտեցումները ձևավորելու ցանկություն: Նախկին Խորհրդային Միության եվրասիական տարածաշրջանի հանդեպ Չինաստանի արտաքին քաղաքականության մշակումն ընթանում է այնպիսի սկզբունքներով, որոնք անմիջականորեն առնչվում են երկրի ազգային անվտանգության ապահովման խնդիրներին:

Խորհրդային Միության փլուզումից հետո Անդրկովկասում և Միջին Ասիայում գերտերությունների և տարածաշրջանային տերությունների ուժերի հարաբերակցության մեջ Պեկինը փորձում է զբաղեցնել այնպիսի տեղ, որը նրան հնարավորություն կընձեռի օգտվելու տարածաշրջանի հսկայա-

⁶ Նույն տեղում:

⁷ Տե՛ս China Armenia vow to Lift Links to New Level.armradio.am. 11.09.2009:

⁸ Տե՛ս Chinese meetings to give new push to development of Chinese-Armenian relations: ARKA news Agency 22/09/2010. <http://www.arka.am/eng/intercoop/2010/09/22/21523.html>

կան բնական պաշարներից, միաժամանակ կչեզոքացնի Չինաստանի Սինձյան (*պատմական Արևելյան Թուրքեստան*) թյուրքալեզու նահանգը առկա անջատողական շարժման համար հենակետ դարձնելու փորձերը:

Ինչպես նշում է **Լ. Շիրինյանը**, Չարավային Կովկասը գտնվում է ռազմաքաղաքական, տնտեսական ու մշակութային երկշերտ ազդեցության գոտում. այն ընկած է Բալկաններից մինչև Չինական մեծ պարիսպ ձգվող «թյուրքական աշխարհի» կենտրոնում⁹:

Չինաստանի հյուսիսում գտնվող Սինձյան նահանգը ամենահարուստ շրջաններից մեկն է երկրում: Նրա տարածքը երկու անգամ գերազանցում է Թուրքիայի Չանրապետության տարածքը: Հարուստ է նավթով, բնական գազով և հանքային հանածոներով: Ըստ արևմտյան փորձագետների տվյալների՝ այն տեղակայված է երկրի կենտրոնից բավականին հեռու, ամբողջությամբ վերահսկվում է չինական զորքերի կողմից և ունի 90% թյուրք-մահմեդական բնակչություն¹⁰:

Տարիներ առաջ Սինձյանում տեղի ունեցան անկարգություններ, որոնք ավարտվեցին արյունահեղությամբ, չնայած որ աջակցություն էին ստացել թուրքական քարոզչական մեքենայից. այս շարժումը շարունակվում է մինչ այսօր: Չինաստանի թյուրք-մահմեդական անջատողականները ցանկանում են դառնալ անկախ պետություն՝ խոշոր թուրք-մահմեդական երկրի կամ միության մի մասը: Թուրքական ազդեցությունը շատ պետություններում՝ Ադրբեջանում, Թուրքմենստանում և Ուզբեկստանում յուրատեսակ փորձ է ստեղծելու նոր միություն¹¹:

Բրազիլացի փիլիսոփա Օլավո դե Կարվալիոն մի հարցազրույցում նշել է, որ ըստ պանթուրքական գաղափարախոսության՝ պարտվելու են չինացիները և ոչ թե ռուսները, սակայն դա կարող է վտանգ ներկայացնել նաև Ռուսաստանի համար, քանի որ Ռուսաստանն ունի 20% մահմեդական բնակչություն, սակայն Ռուսաստանը կհաղթահարի այդ խնդիրը¹²: Չինաստանի դեպքում Թուրքեստանը մեկուսացված շրջան է, և չինացիների համար շատ բարդ կլինի անջատողականներին վերահսկելը, և դա կհանգեցնի արյունահեղության¹³:

Համաձայն թուրք գիտնական Ս. Բատուրի անվտանգության տեսության՝ Սինձյանի թյուրք-մահմեդական բնակչությունը ավելի հակված է դառնալու թուրքական կայսրության մի մասը, նույնիսկ Ռուսաստանի, բայց ոչ Չինաստանի¹⁴: Համաձայն իսլամի, նշում է թուրք քաղաքագետ Բ. Ադիբեկին, մահմեդականները չպետք է ապրեն անհավատների լծի տակ, իսկ չինացիները դասվում են ամենավատ անհավատների շարքին: Մահ-

⁹ Տե՛ս **Լ. Շիրինյան**, Նոր աշխարհակարգը և Հայաստանը, Եր., 2006, էջ 165-167:

¹⁰ Տե՛ս **Q&A**: China and the Uighurs. BBC News. UK-Asia Pacific UK. 08/07/2009: <http://news.bbc.co.uk/2/hi/7540636.stm>

¹¹ Տե՛ս Turkic Republics and Communities. The most complete guide to the Turkic world. 01.06.2011 <http://www.khazaria.com/turkic/>

¹² Տե՛ս **Jeff Nyquist**. Russia, China, Radical Islam and the Latin American Threat to US Survival. 20.02.2011 <http://www.freerepublic.com>

¹³ Տե՛ս **Q&A**, նշվ. աշխ.:

¹⁴ Տե՛ս **Batur S.** East Turkestan and China's Security. Centre for Strategic Studies-Bilgesam. 11.07.2010. [http://www.bilgesam.org/en/index.:](http://www.bilgesam.org/en/index.)

մեդականների համար թիվ մեկ թշնամի համարվում է ոչ թե ամերիկացին ու հրեան, այլ չինական կառավարությունը¹⁵:

2000 տարուց ավելի Չինաստանը փորձել է իր ներկայությունը հաստատել Սինձյան տարածաշրջանում (չինարեն՝ նոր սահման), սակայն միայն 17-րդ դարում այն միացվեց Չինաստանի կայսրությանը: Այդ ժամանակներից ի վեր մուսուլման թուրքալեզու ուլղուրները փորձում են առանձնանալ Չինաստանից և դառնալ անկախ թուրքական պետություն, որի պատճառով չինական կառավարությունը ուլղուրների նկատմամբ ճնշողական քաղաքականություն է վարում: Հետազոտողներից Բերգերը հիշեցնում է, որ փոքրամասնությունների հանդեպ Չինաստանի դրսևորած դաժան վերաբերմունքը կարող է հանգեցնել լուրջ խնդիրների: Ոչ մի լավ բան չի սպասվում, եթե անջատողականները սկսեն ապաստան գտնել հարևան միջինասիական երկրներում¹⁶:

1990-ականներին թուրքական արտաքին քաղաքականությունը կառուցվում էր մի գաղափարախոսության վրա, որը ձգտում էր ստեղծել մեծ թուրքական աշխարհ Ադրիատիկից մինչև Չինական մեծ պարիսպ՝ ուղղելով թուրքական քաղաքական կուրսը դեպի պանթուրքիզմ՝ «Մեծ Թուրան»: Այս ուղղվածությունը առաջին հերթին անհանգստացրեց հենց չինացիներին իրենց երկրի հյուսիսում գտնվող ուլղուր բնակչության պատճառով¹⁷: Չինաստանը սկսեց բարձրաձայնել իր անհանգստությունները պետությունների տարածքային ամբողջականության վերաբերյալ: Նրան անհանգստացնում էր նաև Ուլղուրական ինքնավար շրջանը, որը մյուս թուրքական հանրապետությունների պես ձգտում էր անկախության: Պատահական չէր, որ 1990-ականների առաջին կեսերին Չինաստանում այդ կապակցությամբ հրատարակված գրեթե բոլոր հոդվածները պանթուրքիզմը ներկայացնում էին որպես լուրջ սպառնալիք¹⁸:

Ինչևիցե, Չինաստանը համագործակցեց Ռուսաստանի հետ, որը կիսում էր նրա անհանգստությունը, քանի որ իր հերթին անհանգստացած էր Չեչնիայի խնդրով: Ըստ պրոֆեսոր Շահսադին Մեգալոմատիսի՝ երկու տերությունները ստեղծեցին Շանհայյան հնգյակը պանթուրքական սպառնալիքի դեմ¹⁹: Վերջինս տարածաշրջանում անվտանգությունը համակարգող մեխանիզմ էր, որն ապահովության համար իր կազմում ընդգրկեց նաև Կենտրոնական Ասիայի առանձին երկրների: 1990-ականների կեսերին Թուրքիան պարտադրված էր լքելու տարածաշրջանը, և բոլոր հույսերը իսպառ կորան, երբ տնտեսական և քաղաքական խնդիրները երկրում

¹⁵ Տե՛ս **Adibelli B.** Can the Uyghurs serve as a Bridge in the Future of Turkey-China Relations. Eurasia Critic. 08/2009. <http://www.eurasiacritic.com/articles/can-uyghurs-serve-bridge-future-turkey-china-relations>

¹⁶ Տե՛ս **Berger L.** The Desecularization of the World. Ethics and Public Policy Centre. Whashington, 1999, էջ 89

¹⁷ Տե՛ս **Adibelli B.**, նշվ. աշխ.:

¹⁸ Տե՛ս **C. Gladney.** China's «Uyghur Problem» and the Shanghai Cooperation Organization. Uyghur American Association. 08/16/2006 | 中国反击“东突”十七年. 南方周末.08/07/ 1999. (Chinese counterattack «East Turkistan» Seventeen years. Southern Weekend .08/07/ 1999.):

¹⁹ Տե՛ս **Dr. Muhammad Shamsaddin Megalommatis.** The Asiatic Landmass and The Geostrategic Alliance Between China and Turkey. Buzzel-inteligent life on the Web.9.22.2008. <http://www.buzzle.com/articles/the-asiatic-landmass>

սրվեցին: 1990-ականների վերջին արդեն Չինաստանն ավելի վստահ հայտարարեց, որ «մեծ թուրքական աշխարհը՝ Ադրիատիկից մինչև մեծ Չինական պատ»²⁰ ոչ այլ ինչ էր, քան խարդախություն:

Կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի հետ հարաբերություններում Չինաստանը ավելի հակված է ռազմավարական գործընկերության, քանզի պարզ է, որ «Մեծ Թուրանի» ստեղծման գաղափարի իրագործման ճանապարհին կանգնած խոչընդոտներից մեկը Հայաստանն է²¹: Հայաստանը Չինաստանի համար կարևորություն է ներկայացնում նաև այն առումով, որ պանթուրանական գաղափարախոսությունը և այն իրականացնելու միտումները անհանգստացնում են Չինաստանին, և որ դրա կողմը հենց Թուրքիան է՝ Հայաստանի անմիջական հարևանը: Այս պարագայում չօգտագործել իրական հնարավորությունը՝ պարզապես կլինի քաղաքական անհեռատեսություն և միանտություն: Հայ քաղաքական և գիտական շրջանակները, պետական կառույցները առավել մեծ թափով պետք է սկսեն խոսել «Մեծ Թուրանի» (մեծ Թուրքիա՝ Ադրիատիկից մինչև Չինական մեծ պարիսպ) վտանգի մասին, Հայաստանում պետք է հաճախակի կազմակերպվեն միջազգային գիտական ու ոչ գիտական միջոցառումներ ու կոնֆերանսներ, որտեղ, հաշվի առնելով ուլդուրների հետ կապված վերջին զարգացումները, առավել մեծ շեշտադրմամբ պետք է խոսել այս հարցում Հայաստանի ունեցած տեղի ու դերի մասին և փորձել հնարավորինս օգուտ քաղել ստեղծված աշխարհաքաղաքական բարդ իրավիճակից: Ըստ Ռ. Սաֆրաստյանի՝ «Չինաստանը Հայաստանը համարում է տարածաշրջանում առանցքային երկիր, քանի որ, համեմատած Ադրբեջանի և Վրաստանի հետ, մեզ մոտ ավելի դինամիկ և կայուն քաղաքական համակարգ է ձևավորվում»²²:

Բավականին երկար ժամանակ «Մեծ Թուրանի» ստեղծման գաղափարախոսությունը ակտիվորեն չէր օգտագործվում թուրքական աշխարհում՝ չնայած որ Թուրքիան աստիճանաբար կարևոր տեղ էր զբաղեցնում մահմեդական աշխարհում, և այս գաղափարախոսության հետևորդները սկսեցին գլուխ բարձրացնել մուսուլմանական մյուս երկրներում:

2008 թ. նորից նկատվեց թուրքական կողմի աջակցությունը ուլդուրներին և փորձը՝ դատապարտելու մարդու իրավունքների ոտնահարումը Չինաստանում: Թուրքիայի վարչապետ Էրդողանը Սինձյանում տեղի ունեցած հայտնի դեպքերը որակեց որպես ցեղասպանություն: Էրդողանի հայտարարությունը անմիջապես առաջացրեց համաշխարհային մամուլի արձագանքը, որում նշվում էր, թե մեղադրելով այլ պետություններին ցեղասպանության մեջ՝ չես կարող խուսափել Հայոց ցեղասպանությունը ճանաչելու պատասխանատվությունից²³: Չինական մամուլն սկսեց խաղարկել քրդերի անջատողականության հարցը, որը չէր արժարժվում Չինաստանում մինչև Էրդողանի հայտարարությունը:

²⁰ Adibelli B., նշվ. աշխ.:

²¹ Տե՛ս Բ. Հովհաննիսյան, Ուլդուրները և մենք, «Նորավանք», 07.15.2009:

²² Տե՛ս Мовсесян Г. Китай считает Армению ключевой страной Южного Кавказа // «Республика Армения», № 39, 03.07.2009:

²³ «Ասոշիեթիդ պրես» (Associated press. 15/11/2008 <http://staging.hosted.ap.org>) լրատվական գործակալությունը Էրդողանի հայտարարությունները մեկնաբանելիս մի ամբողջ պարագրաֆ նվիրել էր Հայոց ցեղասպանությանը. Unrest among Uyghur residents in China. CNN. 07.06.2009. <http://www.cnn.com/2009/WORLD/asiapcf/07/05/china.uyghur>.

Ավելին, չինական պետական ՁԼՄ-ները, ինչպես որ սպասվում էր, արձագանքեցին ավելի քննադատաբար: Օրինակ՝ նույն թվականի հուլիսի 14-ին «The people daily» թերթը գրեց. «Շատ չինացիներ վիրավորված են թուրքական գործողություններով և կարծում են, որ Չինաստանը պետք է փոխի իր մոտեցումը Քրդական աշխատանքային կուսակցության հանդեպ, պետք է աջակցի նրանց անկախացման ճանապարհին և պարտադրի Թուրքիային վճարել նման գործողությունների դիմաց: Թուրքերն արդեն մեկ անգամ Արևմուտքի կողմից մեղադրվել են ցեղասպանություն իրականացնելու մեջ»²⁴: Այս նույն թերթը հրապարակեց Թուրքիային դատապարտող և մի քանի հոդված: Մեկ այլ չինական թերթ՝ «China daily»-ին, հրապարակեց հոդված «Մի աղավաղեք փաստերը» վերնագրով, որում կոչ էր անում էրդողանին՝ «հրաժարվել իր արտահայտություններից, քանի որ դա նման է այն բանին, որ գողը բղավում է՝ վերջ տվեք գողությանը»²⁵: Կասկած չի հարուցում այն, որ նման վերնագիրը խոսում է Հայոց ցեղասպանության փաստի մասին, որը, սակայն, թուրքական կառավարությունը փորձում է ժխտել, իսկ չինական կողմը, մեղմ ասած, շահարկել:

Կարելի է եզրակացնել, որ թե՛ չինացիները և թե՛ Չինաստանի կառավարությունը բավականին տեղյակ են 20-րդ դարի Հայոց ցեղասպանության ողբերգական փաստին: Իսկ թուրքերին լռեցնելու լավագույն միջոցներից մեկը կլինի Չինաստանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը:

2007 թ. հայ-չինական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 15-րդ տարեդարձի կապակցությամբ արտգործնախարար Լի ճաոսինը նշել է. «Հայերը և չինացիները, լինելով աշխարհի հնագույն ազգություններ, իրենց աշխատասիրության և տաղանդի շնորհիվ մեծ ներդրում ունեն մարդկության պատմության զարգացման գործում: Հին ժամանակներում Չինաստանի և Հայաստանի ժողովուրդների միջև բարեկամության սկիզբ է հանդիսացել Մետաքսի մեծ ճանապարհը, և այդ ժամանակներից ի վեր առևտրի, մշակույթի և արվեստի բնագավառներում մեր բարեկամական կապերը չեն ընդհատվել»²⁶:

Չինաստանի հաջողության գրավականներից մեկը եղել է «Մետաքսի մեծ ճանապարհը»: Ճանապարհ, որն իրար է կապել մի շարք երկրներ, այդ թվում՝ Հայաստանը Չինաստանի հետ: Այս հարցի քաղաքական կողմը, մեծ կարևորություն ունի ինչպես Հայաստանի, այնպես էլ Չինաստանի համար:

Մեր օրերում մշակութային կապերի մասին է խոսում Կոնֆուցիուսի ինստիտուտի բացումը Երևանում, որը միակն է Կովկասում: Չինաստանը, թերևս, լուրջ մտադրություն ունի հայերին ծանոթացնելու չինական մշակույթին: Այս փաստը պետք է ողջունել և ամենայն լրջությամբ օգտագործել Չինաստանի կողմից ձեռնարկվող ջանքերը ու հանդես գալ պատասխան նախաձեռնություններով, որոնք կնպաստեն մշակութային համագործակցությանը:

Հայաստան կատարած այցի ժամանակ Լի ճաոսինը նշել է. «1000 տարի առաջ Չինաստանում հայտնաբերվեց թղթի արտադրությունը, 800

²⁴ Public angered by Turkish PM's «genocide» accusation. Peoples Daily Online. 14/07/2009. <http://english.peopledaily.com.cn/90001/90776/90882/6699942.html>

²⁵ «China demands Turkish Retraction». China Daily. 07/15/2009 <http://bbs.chinadaily.com.cn/viewthread.php?tid=641643>

²⁶ «Հայ-չինական հարաբերությունները անցյալի և ներկայի բարձունքից», «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, №11, 11/04/2007:

տարի առաջ Հայաստանում արդեն ստեղծվում էին ինքնահոս գրիչներ: Թանկագին չին և հայ եղբայրներ, այժմ մեր սերնդի հերթն է, եկեք տեսնենք, մտածենք, թե ինչ կարող ենք համատեղ ստեղծել, եկեք գրենք համաշխարհային պատմության նոր էջեր թղթով և գրչով՝ Հայաստանի և Չինաստանի սեփականության իրավունքով»²⁷:

Կարելի է հետևություն անել, որ հայ-չինական ռազմավարական հարաբերությունները ծավալվում են ոչ միայն տնտեսական, մշակութային, քաղաքական ոլորտներում :

ГОР САРГСЯН – *Стратегический аспект армяно-китайских отношений.* – Армяно-китайские отношения имеют вековую историю. Экономические и культурные связи развиваются на основе взаимных интересов обоих государств. Однако армяно-китайские отношения важны также со стратегической точки зрения, что выражается главным образом в Нагорно-Карабахском и Тайваньском вопросах. Но не только. Во многом опасная «Туранская программа» создаёт новую область для взаимовыгодного сотрудничества. Стратегические отношения между Китаем и Арменией укрепляются и совершенствуются.

GOR SARGSYAN – *The Strategic Aspect of Armenian-Chinese Relations.* – Armenia and China have centuries-old relations. Economic and cultural relations are developing on the bases of mutual interests. Armenian-Chinese relations are also interesting from the strategic aspect which is mainly expressed in Nagorno Karabagh and Taiwanese issues. But the strategic relations are not restricted by Nagorno Karabagh and Taiwanese issues. The danger of realization of the historical project "Big Turan" is creating a new field for the mutually favorable strategic cooperation. These strategic relations are improving and becoming stronger.

²⁷ Նույն տեղում: